


Տիգրան Հայրապետեանի քաղաքական դասերը Ղարաբաղեան հակամարտութեան հանգուցալուծման շուրջ

ԴԱՍ ԱՌԱՋԻՆ – Անկախ դիւանագիտական բնոյթի խարդաւանքներից, աշխարհքաղաքական գործընթացների ներկայիս ուղղվածությունը նպաստաւոր է եւ համընկնում է Արցախի բնակչութեան ազատ ապրելու ձգտմանը: Այս փաստը պետք է հստակ գիտակցել եւ խուսափել աւելորդություններից, որոնք ընդամենը բարդացնում են միջազգային աստեանների աշխատանքը՝ թաքցնելու իրենց կողմնակալությունը ոչ միայն Լեռնային Ղարաբաղի, այլեւ միւս էթնոտարածքային հակամարտություններում: Սա բնականաբար հայասիրութեան կամ հայանպաստութեան հետ ոչ մի կապ չունի. պարզապէս ժամանակի քաղաքական տրամաբանությունը ուղղված է բազմազգ երկրների, մեծ ու փոքր կայսրությունների դեմ, որոնցից մեկն էլ Ադրբեջանն է: Իսկ Ադրբեջանը, բացի այն, որ միկրոկայսրություն է, նաեւ նավթակիր երկիր լինելու դժբախտությունն ունի: Երկու հանգամանք, որ կանխորոշում են նրա դատապարտվածությունը եւ Լեռնային Ղարաբաղի անկախութեան իրավունքը: Բայց...

ԴԱՍ ԵՐԿՐՈՂ – Բաւարա՞ր է արդեօք համազգային խոհեմությունը՝ չհաւատալ կործանուող ռուսական Բաբելոնից շոայլուող խօստումներին, չենթարկուել միջազգային դրամակիր կաւատկազմակերպությունների պահանջներին (որպիսին են ՄԱՀ-ը եւ ՀԲ-ը) եւ գոնե ի պատիւ քրիստոնեութեան ընդունման 1700 ամեակի՝ հրաժարուել քաղաքական-հասարակական քրմաւարությունից: Եթե այո, ապա սերունդն այս անցած չի լինի, երբ իրականություն դարձած կլինի սերունդների երազը:



ԴԱՍ ԵՐՐՈՐԴ – Քաղաքագիտութեանն ու դիւանագիտութեան պատմութեանը բաւականաչափ տեղեակ ցանկացած մեկը կ'փաստի, որ աշխարհքաղաքական գործընթացներում պատահականութեան գործոնը նուազագոյն է, իսկ առաւել հաճախ՝ բացակայում է իսպառ: Ուստի եւ նրանցում ընդգրկուած միաւորների կողմից կտրուկ շրջադարձերի փորձերը ենթակա են պատժի, քանզի հաւակնում են ծրագրաւորուած գործողութիւնների մեջ ներմուծել պատահականութեան կամ անկանխատեսելիութեան տարրը: Այդ իսկ պատճառով, երկու հակադիր բեւեռների քննադատութիւն մատնուած ծայրահեղականացած տեսակետները վտանգաւոր են ցանկացած էթնո-տարածքային հակամարտութեան պարագայում: Լինի դա անձնատուր լինելու մտայնութիւնը, թե համայն աշխարհին ազգովին դիմագրաւելու ռազմատենչ կեցուածքը, երկուսն էլ ընդհանուր ոչինչ չունեն Լեռնային Ղարաբաղի արդար դատի պաշտպանութեան հետ: Աւելին, հենց ծայրահեղութիւնների բախման պատճառով է, որ երբեւիցե կարող ենք տանուլ տալ:

ԴԱՍ ՉՈՐՐՈՐԴ – Վերջին տասնամեակների տարածքային հակամարտութիւնների պատմութեան բաղկացուցիչ մասն են կազմում դրանց հանգուցալուծման հնարաւոր տարբերակների անդրադարձող միջազգային խորհրդածողովները: Ընդհանրապէս, միջազգային կազմակերպութիւնների ընդունած որոշումների իրականացումն ու հնարաւոր պատժամիջոցների կիրառումը ուղիղ համեմատական է հակամարտութեան մասնակից երկրների քաղաքական վարկին, ազդեցութեան լծակներին եւ շահագրգիռ երկրների հասարակական կարծիքին: Միջազգային կազմակերպութիւնների սկզբունքները, ինչպէս եւ արեւմտեան «անխախտ» արժեքները քաղաքական գործօն են դառնում միայն այն ժամանակ, երբ դրանք համընկնում են իրենց իսկ շահերին: Փորձը ցոյց է տալիս, որ էթնո-տարածքային հակամարտութիւններում, հակառակորդ կողմերին հաշտեցնելու նպատակով, միջազգային կազմակերպութիւնների մասնակցութիւնը



հիմնականում արդիւնաւէտ չէ, իսկ միջնորդ երկրները ժամանակի ընթացքում ներքաշում են հակամարտութեան մեջ եւ ակտիւ մասնակցութիւն ունենում՝ պաշտպանելով կողմերից մեկի շահերը: Շատ դեպքերում նոյնիսկ չարաշահում են «խաղաղեցնող» ուժի իրաւունքները եւ միջամտութեամբ աւելի բարդացնում իրաւիճակը: Չթերագնահատելով միջոցառումները, որ ձեռնարկուել ու ձեռնարկուում են ՄԱԿ-ի, այլ միջազգային կազմակերպութիւնների եւ մեծ տերութիւնների կողմից, հարկ է ընդունել, որ ինչպէս միջինարեւելեան հակամարտութիւններում, այնպէս էլ հայ-ադրբեջանական հարաբերութիւններում խնդրի լուծման լաւագոյն ձեւը երկկողմանի, անմիջական քանակցութիւններն են: Մենք կողմ ենք խաղաղութեան հաստատման ցանկացած փորձին, սակայն գտնում ենք, որ արցախեան խնդրի միջազգայնացումը կարող է վատ հետեւանքներ ունենալ հատկապէս մեզ համար:



ԴԱՍ ՀԻՆԳԵՐՈՐԴ – Մեր քաղաքական վիճակն իսկապէս բաւականին բարդ է, եւ շատ կարեւոր է, որ մենք չզիջենք քաղաքական նախաձեռնութիւնը որեւէ կողմնակի ուժի: Օգտուելով հակամարտութեան կարգաւորման աշխատանքներում միջնորդ-երկրների մասնակցութիւնից՝ մենք պետք է ինքներս մշակենք կարգաւորման քաղաքականութիւնը եւ ծառայեցնենք այն մեր եւ խաղաղութեան հասնելու նպատակներին: Կրաւորականութեան եւ մեծ քաղաքականութեան բացակայութեան պայմաններում հանրապետութիւնն ու Արցախը հերթական անգամ խաղալիք կդառնան աւելի գորեղների ձեռքին, եւ պատմութիւնը կարող է կրկնուել... Որպէս նման նախաձեռնութիւն կարող է ծառայել, օրինակ, համապարփակ խաղաղութեան անհրաժեշտութեան խնդրի միջազգայնացումը, որն իր մեջ կներառի շրջանային բոլոր հակամարտութիւնները, այդ թւում նաեւ՝ արցախեան խնդիրը:

ՂԱՍ ՎԵՑԵԼՈՐԴ – Ազգային խնդիրները չեն սիրում տարերայնություն ու ինքնագործունեություն: Տարբեր տիպի «հայրենասերները», որ այժի են ընկնում ընդգծուած անհանդուրժողութեամբ, հիմնականում ծառայում են օտար երկրներին եւ նրանց ծառայութիւններին՝ կրօնական կամ

քաղաքական որոշակի ազդեցութեան հետեւանքով: Անհամաձայնութիւնը պայքարող կողմի շարքերում պարբերաբար խանգարում է հարցի լուծման ուղղութեամբ տարուող աշխատանքներին եւ հնարաւորութիւն է տալիս հակառակորդին՝ հաջողութեամբ մաներելու պայքարող կենտրոնի ու «ինքնագործ» ուժերի միջեւ: Քաղաքական պարտադիր կենտրոնի բացակայութիւնը կամ նրա անտեսումը որոշակի ուժերի կողմից կհանգեցնեն նոյն հետեւանքներին, ինչպէս, օրինակ, պաղեստինցիների դեպքում էր:

ՂԱՍ ՅՈԹԵԼՈՐԴ – Շրջանային հակամարտութիւնները մեծ քաղաքականութեան անհրաժեշտ հատկանիշներն են: Որոշ առումով դրանք մեղմացնում են վտանգաւոր դիմակայութիւնը առավել գորեղ ուժերի միջեւ:

Մեծ տերութիւնների համար շրջանային հակամարտութիւնների ու նրանց մասնակիցների «խաղարկումը» տուեալ շրջանում գերիշխանութիւն հաստատելու ամենակարճ ճանապարհն է: Չկա այն կազմակերպված ուժը (Կիպրոսեան խնդրում, օրինակ, դա Արեւմուտքն էր), որ շահագրգռուած լինի հակամարտութեան

շուտափոյթ կարգաւորման հարցում: Արցախեան հակամարտութիւնը նպաստաւոր պայմաններ է ստեղծում նրա մասնակիցների վրա ճնշում գործադրելու եւ Կովկասում գերիշխանութիւն հաստատելու մրցակցութեան համար:

Պատերազմող կողմերի անմիջական հարեւանները՝ Իրանն ու Թուրքիան, կարող են շահարկել Արցախի խնդիրն անժամկետ, մերթ ընդ մերթ փոխելով կեցվածքը, ճնշման ուղղութիւնն ու հզօրութիւնը:



Թեև այս երկու երկրները խիստ հակադիր են միմեանց, ինչը Հայաստանում հոյս է ներշնչում նրանց միջև խուսանալու հնարաւորութեան առումով, սակայն պետք չէ բացառել, որ երկուսն էլ գոհունակութեամբ կրնդունեն Ադրբեջանի հաջողութիւնը:

Ռուսաստանի քայլերի անհետետողականութիւնն ապացոյցն է այն անորոշութեան, որ տիրում է երկրում: Ռուսաստանը գտնուում է անցումային դժուարին փուլում, եւ հայտնի չէ, թէ երբ վերջնականապէս կկողմնորոշուի իր արեւելեան քաղաքականութեան մէջ: Ո՞ր նախասկիզբը կհաղթանակի ռուսական քաղաքական մտքում՝ աւանդական քրիստոնէայ միաւորողի՞, թէ ռուս-թյուրքական դաշինքի վրա հիմնուած նոր գերտերութեան: Այսօր գործոնների ծանրութեան նժարը հակում ունի թեքուելու դեպի երկրորդը: Թէ որքանով է Արեւմուտքը հաւատարիմ «մարդու իրաւունքների պահպանման առաջնայնութեան» սկզբունքին, կարողացանք համոզուել հայ-ադրբեջանական հարցում ԱՄՆ եւ Ֆրանսիայի դիւանագիտական քայլերով: Մեծ տերութիւններն առաջնորդում են քաղաքական հաշուարկներով, ոչ թէ զգացմունքայնութեամբ, եւ անիմաստ է վիրաւորուածի կեցուածք ընդունել կամ բարձրաձայն արտայայտուել խաբուած ակնկալիքների մասին:

Այս ամենն ի հարկէ չի նշանակում, թէ որեւէ մէկը թոյլ կը տայ Ադրբեջանին հեշտութեամբ հաշուեյարդար տեսնել ԼՂՀ հետ: Մեծ քաղաքականութեան համար շրջանային հակամարտութիւններն արժեքաւոր են իրենց երկարատեւութեամբ: Կարելի է ենթադրել, որ այս անգամ էլ խաղի կանոնները կը պահպանուեն: Խնդիրն այլ է. որքանով է հակամարտութեան տեսականութիւնը համապատասխանում Հայաստանի ու ԼՂՀ շահերին, ի՞նչ գին կը վճարի մեր ժողովուրդն այս խնդրի հանգուցալուծման համար, եւ յօգուտ ու՞մ այն կը լուծուի:



ՂԱՍ ՈՒԹԵՆՈՐԴ – Կազմակերպելով մեր արտաքին քաղաքականությունը՝ մենք պարտաւոր ենք հաշուի առնել նրբութիւնները, որ յատուկ են Միջին Արեւելքին: Խօսքը նախելառաջ արտաքին քաղաքականութեան ուղղուածութեան մասին է: Թիրիմացութիւն է կարծել, թէ մեր տնտեսական ու քաղաքական խնդիրները լուծուելու են Արեւմուտքի հովանու ներքոյ: Անշուշտ, Արեւմուտքի հովանաւորութիւնը դրական դեր կարող է խաղալ նորաստեղծ հանրապետութեան քաղաքական ու տնտեսական ինքնահաստատման համար, բայց գերազնահատել նման հնարաւորութիւնը ճիշտ չէ: Մենք միջինարեւելեան երկիր ենք եւ պարտաւոր ենք հաշուի նստել այս շրջանում ձեւաւորուած քաղաքական համակարգի հետ: Մեր ուժգին ձգտումը դէպի Արեւմուտք՝ շրջանի երկրների հետ յարաբերութիւնների, մեղմ ասած, անուշադրութեան պայմաններում կարող է անցանկալի կարծիք ստեղծել Հայաստանի համար «նախատեսուած» քաղաքական դերի վերաբերեալ: Չմոռանանք, որ Արեւելք-Արեւմուտք հակասութիւնը ձեւաւորուել է հազարամեակների ընթացքում, եւ այս շրջանում աւանդականօրէն անբարեացակամ են վերաբերում հակառակորդի «դրածոների» նկատմամբ: Միջին Արեւելքը պարունակում է ամէնը, ինչ մեզ հարկաւոր է մեր բարդ խնդիրները լուծելու համար. այստեղից մենք կարող ենք ստանալ եւ վառելիք, եւ սննդամթերք, եւ կապիտալ ներդրումներ՝ մեր տնտեսութիւնը զարգացնելու համար: Եթէ Հայաստանն ունենա կարգաւորուած ակտիւ յարաբերութիւններ Միջին Արեւելքի երկրների հետ, այնժամ նա մեծ արժէք կը ներկայացնի նաեւ Արեւմուտքի համար:



ՂԱՍ ԻՆՆԵՆՈՐՂ – Եթէ համեմատութիւն կատարենք Արեւմտեան Եւրոպայի «փորատակը» խառնած բալկանեան պատերազմի խաղաղ կարգաւորման փորձի հետ, ապա ակնյայտ է դառնում, որ խօսքը գնում է ոչ թէ տարածաշրջանի բազմաբարդ խնդիրների իրական հանգուցալուծման, այլ միջազգային զինուած ուժերի ընդգրկմամբ



ժողովուրդների ազատ կամքի բռնադատման համակարգի ստեղծման մասին: Եւ ինչպիսին որ ազգաբաղաբաղական իրավիճակն է այսօր նախկին Հարաւսլաւիայում ու Բալկաններում ընդհանուր առմամբ, այնպիսին էլ լինելու է Մեծ Կովկասում եւ Կենտրոնական Ասիայում. միշտ պայթելու

պատրաստ վառօդի տակառներ, որոնց պատրոյգները ժամանակաւորապէս պահում են միջազգային խաղաղարարների ձուքակօշիկների տակ: Յանուն արդարութեան, ի հարկէ, պէտք է

նշել, որ առաջադրուած ծրագրերում ներկայացուած են նաեւ գայթակղութիւն-երաշխիքները, որ պէտք է ետ պահեն

տարածաշրջանի ժողովուրդներին իրենց ազգային նկրտումների համար պայքարի վերսկսումից: Դա

անշուշտ փողն է, մեծ փողը, որ ըստ ամերիկացիների՝ կը հոսի իշխող վարչակարգերի չիրկիզուող պահարանները, քաղաքական հարցերի լուծումից անմիջապէս յետոյ:


Միամտութիւն է կարծել, թէ Միացեալ Նահանգների համապատասխան

հաստատութիւններում ծանօթ չեն նորանկախ հանրապետութիւնների իշխող վարչակարգերի

անկշտութեան աստիճանին եւ չեն պատկերացնում, թէ անկախ տրամադրուելիք գումարներից եւ ինտեգրացիայից ակնկալուող հնարաւոր շահոյթներից, տարածաշրջանի երկրները մնալու են թերզարգացած, աղքատիկ կենսամակարդակով բնակչութեամբ եւ խորացած հոգեւոր տգիտութեան մէջ:



Ամենայն
հաւանականութեամբ հէնց
այդպէս էլ հաշուարկուած
է, եւ տասնեակ
ժողովուրդների
պարգապէս նախանշուած է
նաւթա-գազամուղների ու
բեռնատարների
սպասարկման ու
պահակութեան դերը, իսկ
գումարները բնականաբար
յատկացուելու են ռազմա-
նստիկանական ուժեղ
կառոյցների ձեւաւորման
համար, որոնք արիւնալի
զսպաշապիկի մէջ կը
պահեն հայրենի
հասարակութիւնները:



Այնպէս որ, շրջանային հակամարտութիւնների, այդ թւում, իսկ գուցէ՝
նախեւառաջ Լեռնային Ղարաբաղի խնդրի «կարգաւորումը» համաձայն
«համընդհանուր ճանաչում գտած միջազգային նորմերի»՝ ընդամենը
սկիզբն է մի մեծ պրոցեսի, որ յանգեցնելու է ժողովուրդների
ստրկացմանը եւ հոգեբարոյական ուժացմանը մի նոր
աշխարհաբաղաբալական համակարգում:

ԴԱՍ ՏԱՍԵԼՈՒՄ - 21րդ դարի քաղաքական նկարագիրը որոշող այս
գերբարդ մրցակցութեան պարագայում, թե՛ Հայաստանի, թե՛ Սփիւռքի
համար անչափ կարեւոր է խիստ հաւասարակշռուած
քաղաքականութիւն վարել մեծ տէրութիւններից իւրաքանչիւրի,
յատկապէս՝ ԱՄՆ եւ Ռուսաստանի նկատմամբ: Արտաքին
քաղաքականութեան ոլորտում իրավիճակային վայրիվերումները,
զգացմունքային եւ յուզական պոռթկումները՝ կապուած այս կամ այն
երկրում կայացուող որեւէ մեծ կամ փոքր որոշման հետ, որոնք
հրականում սկզբունքային նշանակութիւն չունեն՝ ընդամենը յաւելեալ

քարոզություններ են ստեղծում ինչպես Լեոնային Ղարաբաղի, այնպես էլ Հայաստանի Հանրապետության ապագայի համար: Պատմական մի փուլում, երբ կենաց-մահու գոտեմարտի բռնուած գերտերությունները չեն գթում անգամ սեփական քաղաքացիներին, անխոհեմ է յուսալ, առաւել եւս՝ ապագան վաղօրօք անվերապահօրէն կապել օտար որեւէ կողմի քաղաքական նկրտումների հետ, կամ հիմնովին ժխտել միւսի հնարաւոր փոխակերպումը: Պէտք է անել հնարաւոր ու անհնարին ամէն ինչ՝ սեփական միտքն աշխատունակ պահելու եւ զարգացնելու համար, իբրեւ ազգային անվտանգութեան միակ վստահելի ու կայուն երաշխիք:

Քաղուած՝ 1992-1997 թթ նիւթերից
www.tigran.hayrapetian.com

